ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

ԳԼՋՅԱՆ Ա. Մ.

Հակոբ Պարոնյանը միայն հանճարեղ երգիծաբան չէ, այլև իր դարի ամենազարգացած մարդկանցից մեկը, որն արժանի տեղ ունի նաև հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության մեջ:

Հայ ժողովրդի և նրա հայրենիքի ապագայի հարցը՝ Հայկական հարցը, եղել է երգիծաբանի մտահոգության գլխավոր առարկան: Հարցի վերաբերյալ նրա մտքերը հիմնվում են կյանքի խոր ճանաչողության վրա: Համառոտ ներկայացնենք Հայկական հարցի և լուծման ուղիների մասին նրա հայեցակարգը:

Երգիծաբանն իր ստեղծագործություններում, հայերից բացի, դիտարկել է ժամանակաշրջանի մեջ իրենց ազգային շահերը հետապնդող թուրքերին, քրդերին, հույներին, հրեաներին, բալկանյան ժողովուրդներին, եվրոպական մեծ ազգերին: Ցույց է տվել, որ նրանք գործում են քաղաքականության խաղի կանոններին ու պահանջներին համապատասխան: Նման պայմաններում, բնական է, որ իրենց խնդիրն արծարծեին նաև հայերը, նկատում է երգիծաբանը, բայց նրանք կանգնած էին լուրջ խնդրի առաջ. մի կողմից, Օսմանյան կայսրության և հայության ուժերն ակնհայտորեն անհակակշռելի էին, մյուս կողմից, վերջինիս առաջնորդները նրան քաղաքական սխալ ուղիով էին տանում:

Երգիծաբանի գաղափարները բխում էին այն հայեցակարգից, համաձայն որի, մարդկության ինչպես հին, այնպես էլ արդի պատմությունը հիմնված էր ուժեղների կողմից թույլերին շահագործելու, իսկ շատ թույլերին՝ հոշոտելու օրենքի վրա: Ուստի հայ ժողովուրդը պետք է գիտակցի, որ գոյություն ունի ոչ թե Հայկական հարց, որին այս կամ այն պատասխանը պետք է տա միջազգային հանրությունը, այլ Հայկական խնդիր, որը պետք լուծի ինքը, եթե ցանկանում է շարունակել պատմական ընթացքը: Երգիծաբանը «խնդիրը» ներկայացնում էր «Մրջյունների բողոքագիրը»[1] փիլիսոփայական առակում՝ աշխարհի բաժանման համար իրար կոկորդ կրծող ազգերի Ազգաժողովին մասնակցած մրջյունի տրագիկոմիկական պատմության միջոցով: Այնտեղ մրջյունների (այն է՝ հայ ժողովրդի)՝ բավական կեղծավորությամբ խմբագրված բողոքագիրը քամահրանքով ընթերցում են ու ասում, թե այն անհեթեթություն է, քանի որ մրջյուններն իրենց հոգսերն ու պարտականություններն ուրիշների վրա են գցում: Ցանկանում են լա՞վ ապրել, թող կռվեն թշնամու դեմ, հաղթեն ու ապրեն... Մրջյունի հոգեբանություն ունեցողը, բնական է, որ շարունակ սրա-նրա կոշիկի տակ ընկնի:

---

[1] **Պարոնյան Հ.,** Երկերի ժողովածու, հ. 5, Ե., 1965, էջ 26-29: Այսուհետև Հ. Պարոնյանի ստեղծագործություններից մեջբերումները կտրվեն սույն հրատարակությունից (հ. 1-10, Ե., 1962-1979)՝ բնագրին կից նշելով հատորը և էջը:

Երգիծաբանը պարզում է ևս մի ճշմարտություն: Մարդկության պատմության մեջ և արդի աշխարհակարգում ազգերից որևէ մեկի, այդ թվում՝ հայ ժողովրդի նկատմամբ հատուկ թշնամանք գոյություն չունի: Յուրաքանչյուրը կարող է հայտնվել նման դրության մեջ, եթե բանիմաց չգտնվի: Երգիծաբանը հիշում է ծանր կացության մեջ հայտնված Օսմանյան կայսրության օրինակը: Վերջինիս գլխին մի ժամանակ կախված էր կործանման վտանգը: Թուլացած կայսրության «բարեկամ-ները», արտաքուստ քաղցր խոսքերով, պատրաստվում էին կարդալ նրա մահվան վճիռը: Սակայն կայսրության կառավարողները, նկատում է երգիծաբանը, ի տարբերություն հայերի առաջնորդների, իրենց երկրի պատմության աղետալի փուլում խելացի ու խորամանկ գտնվեցին: Գիտակցելով, որ Հունաս-տանի «շահերը պաշտպանող» վեց տերությունների հորդորները վաղն իսկ կարող են փոխվել, եթե «քամին» այլ տեղից փչի, մի կողմից, հույսը չդնելով ուրիշների վրա՝ աշխատել են ուժեղանալ, մյուս կողմից, պատմական Քսերքսեսի նման երկիմաստ պատասխան են տվել թշնամուն՝ հո՞ղ ես ուզում, «եկուր, անձամբ առ» (4, 384):

Դիվանագիտական տերմինաբանության շղարշի տակ թաքցվում են քաղաքական դաժան, արյունարբու խաղեր: Հայ մարդը պետք է դա գիտակցի, պատրանքներով չտարվի: Դիվանագիտության ասպարեզում հողային հարցերը ուժով են լուծվում, ոչ թե որոշումներով: Կոնկրետացնելով իր ասելիքը Հայկական խնդրի լուծման ուղու վերաբերյալ՝ Հ. Պարոնյանը այլաբանորեն մի շատ կարևոր միտք էր բանաձևում. «Ես ալ այսօր իմ որոշումս տվի Հայաստանի նկատմամբ… Ինքնօրինություն տվի Հայաստանին: Գնա ա՛ռ, եթե կարող ես» (4, 388):

Երգիծաբանը բացահայտում էր ևս մի ճշմարտություն. քաղաքականության մեջ ամեն ինչ կատարվում է հանուն շահի: «Ի՞նչ է բոլոր շըփոթությանց, կռիվներու, պատերազմներու պատճառը: Ոսկի՛ն» (4, 48),- գրում է նա: Քաղաքականության խնդիրներին առնչվելիս պետք չէ պատրանք ունենալ. «Քաղաքականության մեջ քաղաքավարություն չկա» (4, 80): Երգիծաբանը ծաղրում է այն միամիտներին, ովքեր հավատում էին, թե եվրոպական դիվանագիտությունը, առանց շահ ունենալու, կարող է լավություն անել ուրիշի. «Կըսեի, ըսի, կըսեմ և պիտի ըսեմ, ա-մեն մարդ իր շահը կը նայի» (4, 13):

Արդի շահամոլ աշխարհակարգում հայերն իրենց դրսևորում են շատ տարօրինակ ձևով, նկատում է հրապարակախոսը, նրանք «գեղեցիկ երազներով օրորված ժողովուրդ» (10, 261) են և, ի տարբերություն ողջամիտ ազգերի, իրենց ազգի քաղաքական հարցերով հարկ են համարում զբաղվել միայն «օղի խմելիս»:

Երգիծաբանը զգոնության էր կոչում հայությանը. հուշում, որ քաղաքական ասպարեզում դրական արդյունք պետք է ակնկալել, երբ ապավինում ես քո բազկի ու բանականության ուժին: Այս ճշմարտությունը չգիտակցելով՝ հայ քաղաքական գործիչները փորձում են օտարների միջոցով լուծել Հայկական խնդիրը: Իսկ արդյունքն այն է, որ խնդրի միջազգայնացումից բոլոր մեծ տերությունները շահ են կորզում, միայն Հայաստանն է, որ՝ «առայժմ բնավ շահ մը չունենալեն զատ, բավականին վնաս ալ տեսավ» (4, 281):

Պետք է գիտակցել՝ զգուշացնում է գրողը. «Եթե դիվանագիտությունը սիրուն կողմ մ՚ունի՝ այն ալ յուր լեզուն է» (4, 267): Իսկ ընդհանրապես՝ քաղաքականությունն այնպիսի բնագավառ է, որտեղ կարող են՝ «մարդու գլուխը կտրել և վերջեն դիակին առջև ծունկ չոքելով ըսել. «-Ընդունե՛, կաղաչեմ, չըլլա որ չընդունիս, ընդունե՛ իմ բարեկամական անկեղծ զգացումներս, մեր վաղեմի բարեկամությունը միշտ հաստատ պիտի մնա» (4,114):

Զգուշորեն պետք է վերաբերվել օտար պետությունների «հայասեր» քաղաքական ու դիվանագիտական ձեռնարկներին, բացատրում է Պարոնյանը. օրինակ, Անգլիայի «հասարակաց կարծիքը հովանոցիս կը նմանի, հովը քիչ մը սաստիկ եթե փչե, մյուս կողմը կը դառնա» (4, 289): Դեսպանների համար սովորական բան է ճշմարտությունն ուրանալը: Ճշմարտությունը որքան մեծ պետք է լինի, որ որևէ դեսպան չկարողանա ուրանալ:

Երգիծաբանը զգուշացնում էր նաև եվրոպացիների «հայասիրությունից». նրանք սովորաբար մանր մարդիկ են: Պարոնյանի պոլսահայ հերոսը հեգնանքով է վերաբերվում նրանց. «Ասոնց մեջ գինի խմելեն, կարգվելեն ու զավակ բերելեն զատ ուրիշ բան չկա» (4, 29). որևէ նկատելի արժանիք չունեն, թեկուզ տնօրինում են աշխարհի բախտը: Եվրոպական որոշ դիվանագետներ, Թուրքիայում հավատարմագրվելով, մարդասիրական գործունեության փոխարեն զբաղվում են դրամաշորթությամբ: Կարնո անգլիական հյուպատոս Թրոթրրի սերը քրդերի նկատմամբ, օրինակ, «հառաջ կուգա յուր կոկորդեն, որ պատիվ ունեցած է վայելելու» իր ստացած տեսակ-տեսակ ընծաները: Անհրաժեշտ է հեռու մնալ նաև ամերիկյան միսիոներներից, որոնք մարդասիրական առաքելության քողի տակ առաջ են տանում իրենց հեռագնա ծրագրերը: Գրողը բացահայտում է հայ գեղջուկի աչքին որպես «սուրաթսըզ մարդ» ներկայացող կաթոլիկ քարոզչի բարոյական կերպարը. «Երբ աչվներ գոց է, անույշ է, ամա երբ բաց է, ճանավարի աչերաց նման է», «աղոթքեն ետքը կ՚ելլա մեզի հում հում կուտի» (10, 271):

Երգիծաբանը նկատել է մի կարևոր երևույթ ևս. XIX դ. երկրորդ կեսին ժողովուրդները, ըմբռնելով, որ մարդու և ազգերի խնդիրը կենսական է դառնում, այն լուծելու տարբեր ուղիներ են ընտրել. «Ինչպես ամեն անհատ, նույնպես ամեն ընտանիք, ամեն վարչություն և վերջապես ամեն ազգ իրեն հարմար և շահավետ» «գիծ» է գծել, «և այն գծին վրայեն» է քայլում (4, 333): Եթե հայերը առաջադիմությունը կապում են եվրոպական մշակույթը յուրացնելու, հրեաները՝ իրենց պատմական հայրենիքում վերահաստատվելու, բալկանյան ազգերը՝ Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու հետ, ապա քրդերն այն պայմանավորում են Հայաստանի ազգագրական պատկերը բռնի ուժի օգնությամբ փոխելով, իսկ թուրքերը՝ նրանց երկուսի նկատմամբ հեռագնա մարդատյաց ծրագրեր կյանքի կոչելով և դրա հետևանքները պաշտոնական վիճակագրության միջոցով վավերացնելով: Իբր բարենորոգում անցկացնելու համար կառավարությունը Հայաստանում մարդահամար է կատարել, բայց «պարզվել է», որ այնտեղ հայերը նկատելի «փոքրամասնություն» են... Եթե Վանի, Կարինի, Դիարբեքիրի և այլ նահանգների մեջ հայերը 17 տոկոս են կազմում հիմա, հեգնում է երգիծաբանը,

կնշանակի, 53 տոկոսը կամ «վերջերս կամ քյուրտերեն սպանված են և կամ այդ վիճակագրությունն ընող պաշտոնյաներեն»... (4, 394):

Երգիծաբանը Հայկական խնդրի մեջ բացահայտել է քուրդ ավազակախմբերի չարագույժ դերը. նրանք ջուր են լցնում և՛ թուրքական քաղաքականության ջրաղացին, և՛, միաժամանակ, սեփական հեռագնա ծրագրերն առաջ տանում: Երբ Հայաստանի վիճակագրությունն էր պատրաստվում, քրդերը, զգուշանալով, որ դրանից ապագայում իրենց կարող է վտանգ սպառնալ, միություն կազմեցին և, կոտորելով հայերին, փաստերը իրենց օգտին դարձրին: «Ի՜նչ կտրուկ ճամբա մեծամասնություն ունենալու համար...» (4, 424),- հեգնանքով գրում է երգիծաբանը:

Նա, կասկած չունենալով, որ օսմանյան կառավարողների քաղաքականության բուն նպատակը Հայաստանը թուրքացնելն է, հայությանը հորդորում էր գիտակցել, որ «խնդիրը» լուծելու համար պետք է անձնվեր պայքար մղի: Իսկ ազատագրության մեր ուղին տարբեր է լինելու հույների և բուլղարների ուղուց: Ո՞ր «եղանակին մեջ» կարելի է Հայաստանում բարեկարգություն կատարել. «Մենք Թուրքիո մեջ չորս եղանակներ ունինք», որոնք ոչ մեկն էլ հարմար չեն դրա համար. «մեզի ուրիշ եղանակ մը, նոր եղանակ մը» (4, 503) անհրաժեշտ է: Ընդ որում, ընդգծում էր երգիծաբանը, թուրքական կառավարության քաղաքականությունից երբեք հայանպաստ փոփոխություն չպետք է սպասել:

Պարոնյանը Հայկական խնդրի լուծվել-չլուծվելը պայմանավորում էր դիվանագիտության օրենքներն իր շահերին ծառայեցնելու հայության կարողությամբ: Հայությունը ոչ թե պարզամտորեն պետք է սպասի, որ տերությունները մի օր լուծեն «խնդիրը», այլ քաղաքական բարենպաստ պայմանների առկայության դեպքում եվրոպական և հայկական շահերը ներդաշնակեցնելով՝ պետք է ինքնուրույնաբար վճռական գործողություններ կատարի: «Սույն խնդիրը գորդյան հանգույց դարձած ըլլալով՝ կը կարծվի թե դանակը միայն պիտի կրնա զանոնք լուծել» (10, 133):

Հայկական խնդիրը լուծելու համար հայ ժողովուրդը՝ իր բանիմաց առաջնորդների գլխավորությամբ, պետք է դիվանագիտական խելամիտ «գիծ մը գծե» և «այն գծին վրայեն քալե» (4, 333), մինչդեռ սոցիալական աղետալի դրության մեջ հայտնըված ժողովրդի մասին մտածող անգամ չկա: Հայության ապագայից խոսողները չեն հասկանում, որ եթե երկիրը դատարկվում է հայերից, դա ինքնին խարխլում է «խնդիրը» հայանպաստ լուծելու սոցիալական և քաղաքական հիմքերը:

Երգիծաբանն առանձին խոսակցության նյութ է համարում հայ հասարակության կենցաղը, բարքերը, կրթությունը, դաստիարակությունը, գործունեությունը, գաղափարներն ու նպատակները «ուղիղ ճանապարհի» վրա դնելու, «ազգի վերականգնման» խնդիրները հասարակության բոլոր շերտերի, բոլոր ուժերի գլխավոր նպատակը դարձնելու հարցերը: Էական է համարում, որ ազգի ուժերը նպատակադիր, ծրագրված աշխատանքի լծվեն. անհրաժեշտ է ժողովրդի նոր սերնդին նախապատրաստել մեծ գործեր կատարելու: Մինչդեռ հայ ազգային գործիչը, հաճախ «ջոջ» է կամ զավառական սահմանափակությամբ տառապող մարդ, որը թըշնամու չարագործություններին գործնականում հակադրում է իր կրավորական կեցվածքն ու մեծախոսությունը: «Մինչդեռ կառավարությունք զորք, նավատորմիղ և այլն կը

ղրկեն հոս իրենց շահն ու պատիվը պաշտպանելու համար,- հեգնում է երգիծաբանը,- Չամուռճյան մեծիմաստ պատվելին ալ բառատորմիղ մը կը ղրկե» (4, 272): Մեր բանադատը հաճախ անսկզբունքային է, քաղաքագետը՝ պարզամիտ, եկեղեցականը՝ «մեֆիստոֆելի կերպարանքով» (4, 489), հարուստը՝ կարճամիտ, ազգային մշակույթի խնդիրների շուրջ բանավեճերը՝ ծիծաղելի, հրապարակախոսությունը՝ ճղճիմ, բանաստեղծը՝ հանգաստեղծ, ամ-բողջ ազգային ընթացքը՝ անղեկ ու անգաղափար: «Այժմ խմբագիրներն իրենց սովորություն ըրած են գրել ինչ որ կ·ուզե ժողովուրդն և ոչ թե ճշմարտությունը», «թերթերն ժողովուրդեն կապրին և ոչ թե ճշմարտութենեն» (10, 281): Ազգի քաղաքական կյանքի պատասխանատուն՝ «սրբազան պատրիարքը», ևս իր դերում չէ: Ուսուցիչը գիտելիքի փոխարեն վատ բարքեր է սովորեցնում: Ազգային մարմին-ները փորձում են գավառում կատարվող ողբերգությունների վրա աչք փակել: Իսկն ասած՝ ազգային ամբողջական մարմին գոյություն էլ չունի (տե՛ս 4, 511), մինչդեռ «Հայկական խնդիրն» օր օրի ավելի է բարդանում:

Եղկելի է «խնդրի» նկատմամբ պոլսահայ քաղքենու և քաղքենուհու կեցվածքը, նկատում է երգիծաբանը: Ամուսինը կնոջն ասում է, թե որոշել է ընտանիքով Հայաստան տեղափոխվել: Դրամի հարցը լուծելու համար էլ որոշել է նրա օղերը ծախել: «Ես սըկե հունա չեմ երթար»,- լինում է կտրուկ պատասխանը:

«- Հապա ամեն օր գլխուս միսը կ’ուտեիր, որ Հայաստան երթանք:

- Բայց չէի ըսեր, որ օղերս ծախենք ու այնպես երթանք:

- Ըսել է թե օղերդ Հայաստանեն ավելի՞ կսիրես:

- Այդ ի՞նչ խոսք է, Հայաստանը կրնա՞մ ականջներես կախել» (4, 430):

Հայաստանի՝ «ինքնօրինություն» ստանալու հույսից խանդավառված Ամբակում աղան էլ, «փատը ուսը դրած», սենյակում, արդեն քանի օր է՝ զինավարժություն է կատարում՝ նոր Հայաստանում կուսակալի պաշտոն ձեռք գցելու սևեռուն գաղափարով տարված. «Կարծեք ավելորդ կը լինի ըսել,- թե եթե Հայաստանին ինքնօրինություն տրվի, յուրաքանչյուր գյուղին ութը հարյուր կուսակալ պիտի իյնա, ամենքն ալ» այս Ամբակումի նման կառավարող լինել են միայն ցանկանում, իսկ կառավարելու համար ստիպված երևի Եվրոպայից պիտի ժողովուրդ բերել տանք (4, 423):

Երգիծաբանը համոզված է, որ քանի դեռ Հայաստանը չի լուծել իր «խնդիրը», միշտ կրելու է օտարների կողմից այն շահարկելուց առաջացած վնասը: Զգուշացնում է նաև, որ եթե ազգային գործիչները, միջազգային դիվանագիտության խաղի կանոնները չհասկանալով, սխալ քայլեր կատարեն, «Հայկական խնդիրը» կարող է հավելյալ փորձանքներ էլ բերել ժողովրդի գլխին: Երբ նպաստավոր չէ «խնդիրն» արծարծելու պահը, պատրաստ չեն կամ տկար են ուժերը, զգուշավոր քաղաքականություն պետք է վարել թուրքական պետության հետ: Այս նկատառումով՝ երգիծաբանը պատգամում է. «Մի խաբվիք, հայե՛ր, նոր տարիները արարչագործության ժամանակ կը գտնվեին, հիմակվան տարիներուն ամենն ալ հին են և 1887-ն ուրիշ բան չէ՝ եթե ոչ է 1876-ը, զոր քիչ մը կարկտած ու վերանորոգած են, նոր բան չկա մեր օրով». «Արևու տակ նոր բան չկա»

(10, 474): Երգիծաբանը հայ դիվանագիտության վրիպումն էր համարում Բեռլինի վեհաժողովին «մրջյունի» դերով մասնակցելը:

Զանգվածային անդիմության և կրավորականության պայմաններում երգիծաբանն անհողդողդ դիրք է գրավում: Ոմանք, գրում է նա, հիասթափվելով, «Հայկական խնդիրն» «երազ» անվանեցին. ինքն այդպես չի կարծում: «Հայաստանի վիճակն անպատճառ փոփոխություն մը պիտի կրե դեպի լավն», բայց միայն այն ժամանակ, երբ «մենք ալ աշխատինք» (4, 485), ընդ որում՝ հոգ տանելով ժողովրդի ոչ միայն ապագայի, այլև ներկայի մասին, ազգի ազատությունը ձեռք բերելու կռվան դարձնելով ոչ թե պատմամշակութային անցյալը, այլ տնտեսական ու քաղաքական գործոնը:

ПАРОНЯН ОБ АРМЯНСКОМ ВОПРОСЕ

ГЛДЖЯН А. М.

Резюме

Великий сатирик в своем произведении изложил своеобразную художественную концепцию мира, в рамках которого обратился к “Армянскому вопросу”. Основываясь на опыте предков и современников, он приходит к убеждению, что причины бедствий армянского народа имеют не только объективную, но и субъективную основу. Сатирик приходит к заключению, что “история человечества в основном подчиняется не морали и разуму, а закону джунглей”.

Дабы не исчезнуть, народ должен перестроить и оздоровить национальную общественную жизнь, освоить законы внешней политики, урегулировать свои отношения с Османской империей и европейскими государствами.